Համապատասխանեցման համար անհրաժեշտ
փաստաթղթեր

1. Համաձայն <<ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 43-րդ կետի գիտական աստիճանի վկայագրի համապատասխանեցման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

ա/ համապատասխանեցման ենթակա վկայագիրը և դրա պատճենը /վկայագրի բնօրինակը վերադարձվում է պատճենի հետ համեմատելուց հետո/.

բ/ վկայագրի վավերացված թարգմանությունը հայերեն.

գ/ թեկնածուի գիտական աստիճանի դեպքում բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, դոկտորի գիտական աստճանի դեպքում թեկնածուի գիտական աստիճանի վկայագիրը.

դ/ կադրերի հաշվառման անձնական թերթիկ.

ե/ ատենախոսությունը /կամ դրա հավասարազորը/.

զ/ սեղմագիրը /կամ դրա հավասարազորը/.

է/ հրատարակված գիտական աշխատանքները.

ը/ անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ներկայացվում են մեկ օրինակից, թղթապանակում կարված: